

## Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

### «ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման մասին»

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» որոշման համաձայն քաղաքաշինության նախարարությունն իրականացրել է միջոցառումներ.

Նախարարությունը մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացրել իրավական ակտերի նախագծեր, որոնք նպատակուղղված են քաղաքաշինության բնագավառի օրենսդրական դաշտի կատարելագործմանը, քաղաքաշինական ընթացակարգերի պարզեցմանը, քաղաքաշինական գործունեության, միասնական պահանջների և չափորոշիչների սահմանմանը և ինքնակամ շինարարության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Մշտապես ուշադրության կենտրոնում է գտնվել աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերը: Բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերի հանձնաժողովը 2011 թվականին քննարկել է 2020 ընտանիքի փաստաթղթային փաթեթներ: ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 և Անի թաղամասերում կառուցվել է 1756 բնակարանից բաղկացած 38 բազմաբնակարան շենք, Ախուրյան համայնքում՝ 104 բնակարանից բաղկացած 3 բազմաբնակարան շենք և ՀՀ Լոռու մարզի 24 գյուղական համայնքներում՝ 571 բնակելի տներ: 2012 թվականին կշարունակվի Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի 9 կիսակառույց բ/շ կառուցման աշխատանքները:

Նախարարությունը մշակել է

ա. «Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգման հայեցակարգը և համակարգի ներդրման ուղղություններից բխող միջոցառումների ժամանակացույց»

բ. «Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագիծ»

գ. 20 համայնքների գլխավոր հատակագծեր

դ. «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի» համաձայն մշակվել է «Կառուցապատողի ուղեցույց» ձեռնարկը:

ե. «Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) բնակելի կառուցապատման օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը և դրանց կատալոգները», ինչի շնորհիվ էապես նվազել է կառուցապատման ընթացակարգի քայլերը, տևողությունն ու արժեքը

ԱՊՀ անդամ երկրների շինարարությունում տեխնիկական նորմավորման, ստանդարտացման և համապատասխանության գնահատման միջպետական գիտատեխնիկական հանձնաժողովի (ՄՆՏԿՍ) 2011 թվականի աշխատանքային պլանի համաձայն իրականացրել է /ԵվրԱզԷՍ/ նախագծերի փորձաքննություն և միջպետական ստանդարտների ընդունման և գործարկման ժամկետ սահմանելու գործընթացներ: Համալրել է ՀՀ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի բազան:

ՀՀ ՔՆ <Քաղաքաշինական ԾԻԳ> ՊՀ պատվիրատվությամբ վերահսկել և իրագործել է ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված 34.9 մլրդ դրամի ծախսային ծրագրեր:

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին իրականացվել է 2.8 մլրդ դրամի պատվիրված գործընթացներ՝ ՀՀ տարածաշրջանային պետական քոլեջների, ավագ և հանրակրթական միջնակարգ դպրոցների, մի շարք վարչական օբյեկտների աշխատատարածքների, հանրակացարանային բնակելի տարածքների հիմնանորոգման, վերակառուցման ու վերանորոգման աշխատանքներ:

Ավարտվել են բյուջետային տարում նախատեսված 28 օբյեկտների 2.2 մլրդ դրամի հիմնանորոգման և կառուցման աշխատանքները: 23 օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված մնացորդային աշխատանքների ավարտը նախատեսվում է 2012 թվականին: